ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտահայտիչ կարդա Ս. Մուրադյանի բանաստեղծությունը և քննարկիր ընկերներիդ հետ:

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ՀԱՅՐԵՆԻՔ

Ես սիրում են քեզ, հայրենիք,
Քո վերելքը, քո դեմքը պերճ,
Թեկուզ լինես հոգսերի մեջ,
Ես սիրում եմ քեզ, հայրենիք:
Քո արտերի հնձվորն եմ ես,
Սահմաններիդ զինվորն եմ ես,
Ամեն ծառիդ այգեպանն եմ,
Ամեն բառիդ պահապանն եմ:
Ես սիրում եմ քեզ, հայրենիք,
Երախտապարտ քո որդին եմ,
Կանաչ, հպարտ քո բարդին եմ:
Քո խնդության վեհ ճիչն եմ ես,
Քո հաղթության երգիչն եմ ես,
Ես սիրում եմ քեզ, հայրենիք: